

ՀՀ վիճակագրական կոմիտեում (ԱՐՄՍՍՍ) պահանջվում է

Տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության տվյալների վերլուծաբան

Աշխատանքային պարտականություններ.

1. Աջակցել հետազոտության ընտրանքի ձևավորման աշխատանքներին
2. Հաշվարկել ընտրանքային կշիռներ, ապահովել կշիռների ճշգրտումը (non-response adjustments, calibration of sampling weights)
3. Հաշվարկել չպատասխանելիության և ծածկույթի մակարդակներ (non-response rate, coverage rate)
4. Վերլուծել տվյալները օգտագործելով SPSS, STATA կամ R ծրագրավորման լեզուներ
5. Հետազոտության տվյալների վերլուծման արդյունքում պատրաստել հրապարակման ենթակա աղյուսակներ՝ օգտագործելով վիճակագրական վերլուծության ծրագրեր ինչպիսիք են SPSS, STATA կամ R
6. Իրականացնել CAPI ծրագրերով հարցումների իրականացման և տվյալների հավաքագրման աշխատանքների համակարգում
7. Անհրաժեշտության դեպքում նախապատրաստել կամ թարմացնել հարցաշարերը CAPI ծրագրով տվյալների հավաքագրումն իրականացնելու նպատակով
8. Կառավարել ծրագրերը (տվյալների ներմուծման, ընտրանքի) և միկրոտվյալների բազաները, սահմանված կարգով տարածել, արխիվացնել միկրոտվյալների բազաները,
9. Փաստաթղթավորել գործընթացները՝ նկարագրել հետազոտության տվյալների աղբյուրը, ընտրանքը, կշիռների հաշվարկն ու ճշգրտումը, տվյալների բազայի ստուգումը՝ ըստ ստանդարտի,
10. Մեթոդաբանական կամ այլ փոփոխությունների դեպքում՝ մշակել, արդիականացնել հետազոտության ծրագրերը, ներմուծված տվյալների թվաբանական, տրամաբանական անհամապատասխանությունների, բացթողումների կանխման և ցուցանիշների հաշվարկման ալգորիթմները, ինչպես նաև՝ գործընթացների նկարագրությունը:

Անհրաժեշտ գիտելիքներ.

- Բարձրագույն կրթություն վիճակագրական, տնտեսագիտական, տվյալների վերլուծության, մաթեմատիկական մոդելավորման կամ հարակից ոլորտներում
- Տվյալների վերլուծաբանի (տնտեսական, մակրոտնտեսական, ժողովրդագրական) կամ հարակից մասնագիտությամբ առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ.
- Մեծածավալ տվյալների բազայի հետ աշխատելու և կառավարելու փորձառություն:
- MS Office - ի (Word, Excel և PowerPoint) տիրապետում
- SPSS, STATA կամ R ծրագրային լեզուների իմացություն
- Վիճակագրական տվյալների վերլուծության աշխատանքային փորձ STATA / SPSS / R ծրագրերով

- Ծրագրային կողեր կարդալու և հասկանալու, անհրաժեշտության դեպքում փոփոխելու և թարմացնելու կարողություն
- Հետազոտության գործիքներն ու տվյալների բազաները վերլուծելու և ծրագրային լուծման առաջարկություններ ներկայացնելու ունակություն.
- Լարված իրավիճակներում աշխատելու և առաջադրանքները սեղմ ժամկետներում կատարելու ունակություն
- Օտարալեզու մասնագիտական գրականությունից օգտվելու կարողություն.
- Գիտելիքները կատարելագործելու և գործնականում կիրառելու ցանկություն

Անհրաժեշտ հմտություններ.

- Նվիրվածություն, սրտացավություն, աշխատասիրություն, բարձր պատասխանատվություն, օպերատիվություն
- Բարեկրթություն, նախաձեռնողականություն
- Դժվարին իրավիճակներում խնդիրներ լուծելու կարողություն
- Գրավոր և բանավոր հաղորդակցության լավ հմտություններ
- Հնարավոր ռիսկերը գնահատելու ունակություն.
- Թիմում աշխատելու կարողություն:

Հիմնական աշխատավարձը՝ 244 600 (ներառյալ հարկեր) ՀՀ դրամ է:

Հավելյալ տեղեկատվություն

Հետաքրքրված անձինք իրենց ինքնակենսագրությունը (CV) կարող են ուղարկել household@armstat.am էլ. հասցեին:

Օգտակար հղումներ.

- « Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2019 » վիճակագրական ժողովածու <https://www.armstat.am/am/?nid=82&id=2217>
- Տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության տվյալների բազաներ և գործիքներ <https://www.armstat.am/am/?nid=15>

Հասցե՝ 0010, Երեւան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3